Նորէն Մոկսի մէջ՝ Եղերով սարի սրտին կայ այժմ հռչակաւոր Փութկի վանքը՝ Ս. Գէորգ անունով. այդ վանքի մէջ կայ և պարզ սենեակ մը որ քիւրդերու ուխտատեղին է, չը նայելով հայերու եկեղեցական փառաւոր շինութեանը, կալուածական սեփականութեանը, հայկական ուխտատեղւոյն խառնուած է և քրդականը, պատճառը.— Որովհետև ոչ միայն ազգագրական մէկ ճիւղի պատկանելուն համար է միայն այդ միութիւնը, այլ և անոր համար՝ որ Փութկին իրական ծառայութիւն մը կր մատուցանէ Հայ և Քիւրդ ժողովրդին՝ վտանգաւոր և անանցանելի լեռնային ճանապարհներու համար իրր ապաստանի վայր։

Ֆրանսայի «Էրնէստ Շատր» որ գիտական առաքելութեամբ պաշտօնապէս Արևմտեան Ասիա ճանապարհորդած է, իր «Recherches anthropologiques dans le Caucase» գրքին մէջ հրատարակուած 1882ին՝ կ'ըսէ։

«Հայաստանի մէջ անոնք աւելի դիւրութեամբ կը խառնուին ժողովուրդներուն՝ որոնց մէջ անոնք կ'ապրին, որը չեն ըներ վերին Միջագետքի և հիւսիսային Սիրիայի մէջ, որոնց ես ուսումնասիրեցի մի քանի ամիսներու ընթացքին»։

Նոր բացատրութիւններ աւելորդ կը դառնան, որովհետև պիտի համարուին կրկնութիւններ։

ՔԻՒՐԴ ԷՇԿԵԱՆ (*)

Ինչո՞ւ կըմբոստանայ Քիւրդ էշկեան և ի՞նչ կուզէ.— Ջընջել ուժեղը ու պաշտպանել տկարը, դուրս գալ կռուի Քիւրդ ցեղապետներու, թիւրք պաշտօնեաներու վարչականութեան դէմ։ Ցոյց տալ կաշառակերութեան դէմ տառտա-

(*) Էշկեա. կը նշանակէ, թէ փոխստական ոճրագործ աւազակ՝ և թէ գաղափարական աւազակ. մեր նիւթը վերջինի մասին է, որ այժմ գրեթէ անհետացեր է Քրդերու մէջէն, տեղը տալով առաջինին։